թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և
մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների
խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի
նշանակություն՝

1) «Դի Էս Սիսթեմս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01240937) 2018 թվականի օգոստոսի
21-ին կնքված N Infra/Constr03-2018 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետի համայնքում «Սմարթ» կենտրոնի
շինարարական աշխատանքների իրականացում՝ 1,947,950 դրամի չափով, առանց
ավելացված արժեքի հարկի:

2) «Դելտապրո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00113358) 2018 թվականի օգոստոսի 21-ին
կնքված N Infra/Constr04-2018 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետի համայնքում «Սմարթ» կենտրոնի
շինարարական աշխատանքների իրականացում՝ 8,109,000 դրամի չափով, առանց
ավելացված արժեքի հարկի:

3) «ԹիՔեյ Ընդ Փարթներս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02604375) 2018 թվականի
սեպտեմբերի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ 3,600,000 դրամի չափով, առանց
ավելացված արժեքի հարկի:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 044
Վեբ կայք՝ www.minfin.am

1/14-2/17449-18
24.09.18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
20.09.2018թ. N 03.1/15.1/31735-18 գրության

Հարգելի տիկին Կարապետյան

Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայաստանի մանուկների
հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ
առարկություններ չունենք, սակայն անհրաժեշտ է ներկայացված որոշման նախագծի 3)
կետում նշված «օգոստոսի» բառը փոխարինել «սեպտեմբերի» բառով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

☒ Invalid signature

X

Signed by: HARUTYUNYAN VAZGEN 3703770104

ՎԱԶԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/52433-18



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«27» 09 201 թ.
No 06/3-8/56750-18

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 20.09.2018թ.
թիվ 03.1/15.1/31735-18 գրության

Հարգելի տիկին Կարապետյան

Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայաստանի մանուկների
հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:

1. «Դի Էս Սիսթեմա» ՍՊԸ-ի հետ 21.08.2018թ-ին կնքած պայմանագրով
նախատեսված շինարարական աշխատանքների որոշակի փուլեր եթե կատարված են,
ապա այդ մասով հարկային արտոնություններ չեն կարող տրամադրվել:

2. «Դելտապրո» ՍՊԸ-ի հետ 21.08.2018թ-ին կնքված պայմանագրով
նախատեսված շինարարական աշխատանքների ավարտը, համաձայն պայմանագրի
6.1 կետի, սահմանվել է սեպտեմբերի 30-ը, ինչը ենթադրում է, որ շինարարական
աշխատանքների որոշակի փուլեր ավարտվել են, իսկ ավարտված գործարքների
մասով հարկային արտոնություններ չեն կարող տրամադրվել:

3. Նախագծի 2-րդ կետում նշել «Թի Քեյ Ընդ Փարթներս» ՓԲԸ-ի հետ
03.08.2018թ-ին կնքված պայմանագրի համաձայն մատուցվող խորհրդատվական

044/52452-18

2/9. 12
ծառայությունների գծով արտոնությունների ակնկալման հստակ ժամանակահատվածը՝
սկիզբը սահմանելով 01.10.2018թ-ը, հաշվի առնելով, որ ծառայությունները մատուցվում
են ամսական կտրվածքով և մատուցված ծառայությունների մասով հարկային
արտոնություն չի կարող տրամադրել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Invalid signature

X

VERIFIED OCSP 9/27/2018 11:05:17 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎԱՀԿ, Ն. Բեժանյան
Հեռ. 060544705



2/9. 12
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԳԽՄԱԳՐԱՄ
CHILDREN OF ARMENIA FUND

02 հոկտեմբերի 2018թ.

COAF 190

ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման խորհրդակցական հանձնաժողովի
Նախագահի տիկին Ա. Կարապետյանին

Հարգելի տիկին Կարապետյան

Ի պատասխան ՀՀ ՊԵԿ Նախագահի տեղակալ պարոն Ա. Մանուկյանի
դիտողությունների հայտնում եմ հետևյալը՝

1. «Դի Էս Սիսթեմս» ՍՊԸ-ի հետ 21.08.2018թ.-ին կնքված պայմանագրով Նախատեսված
շինարարական աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են և Նախատեսված է, որ բոլոր
աշխատանքները կավարտվեն սույն թվականի հոկտեմբեր ամսին: Խնդրում եմ հարակից
գործարքը ազատել ԱԱՀ-ից:
2. «Դելտապրո» ՍՊԸ-ի հետ 21.08.2018թ.-ին կնքված պայմանագրով Նախատեսված
շինարարական աշխատանքները նույնպես գտնվում են ընթացքի մեջ: Կապալառուի
կողմից դեռևս չի ներկայացվել որևէ շինարարական աշխատանքների կատարողական
ակտ: Շինարարական նյութերի որոշ մասը առաքվել է սեպտեմբերի 20-ից հետո և
տեղադրման աշխատանքները դեռ ընթացքի մեջ են: Խնդրում եմ հարակից գործարքը
ազատել ԱԱՀ-ից:
3. «Թի Զեյ Ընդ Փարթներս» ՓԲԸ-ի հետ պայմանագիրը կնքվել է սույն թվականի
սեպտեմբերի 03-ին և անմիջապես ներկայացվել է հանձնաժողովի դատին: Պարոն Ա.
Մանուկյանի դիտողության մեջ պայմանագրի կնքման ամսաթիվ է ներկայացված
օգոստոսի 03-ը, ինչը սխալ է: Խնդրում եմ նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ
հիմնադրամը դիմել է հանձնաժողովին սույն թվականի սեպտեմբերի 08-ին և փաստորեն
դրանից մեկ ամիս անց հանձնաժողովը հրավիրում է նիստ: Այս պարագայում
Հայաստանի մանուկներ հիմնադրամին չտրամադրել հարկային արտոնություններ՝ հիմք
ընդունելով նիստի ուշ կայացման ժամկետը, համարում եմ ոչ տեղին:

Խնդրում եմ Ձեզ, բոլոր երեք հարակից գործարքները համարել հիմնադրամի 2015
թվականի մարտի 27-ի թիվ U-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրի հարակից գործարք և
ազատել ԱԱՀ-ից:

Հարգանքով՝

Իննեսա Գրիգորյան
Փոխտնօրեն, վարչական հարցերով ղեկավար



amcoaf190s.org

www.coaf190s.org

ՀՀ, ք. Երևան 0001, Հյուսիսային պողոտա 1,
8-րդ հարկ, 24 սենյակ
Հեռ.՝ (+374 10) 50 20 76, 53 34 12
Ֆաքս՝ (+374 10) 50 20 76

1 Northern Ave., 8th Floor, Suite 24
Yerevan 0001, RA
Tel.: (+374 10) 50 20 76, 53 34 12
Fax: (+374 10) 50 20 76

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայաստանի մանուկների հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

Դիտորդության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարություն – 27.09.18, N 1/14-2/17419-18	
Անիտաճեշտ է ներկայացված որոշման նախագծի 3) կետում նշված «օգոստոսի» բառը փոխարինել «սեպտեմբերի» բառով	Առաջարկությունը ընդունվել է, կցված է նախագծի լրամշակված տարբերակը
ՀՀ պետական եկամուտների կոմիտե – 27.09.18, N 06/3-8/56750-18	
1. «Դի Էս Միսթեն» ՍՊԸ-ի հետ 21.08.2018թ-ին կնքված պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների որոշակի փուլեր եթե կատարված են, ապա այդ մասով հարկային արտոնություններ չեն կարող տրամադրվել: 2. «Դեյուսպրո» ՍՊԸ-ի հետ 21.08.2018թ-ին կնքված պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտը, համաձայն պայմանագրի 6.1 կետի, սահմանվել է սեպտեմբերի 30-ը, ինչը ենթադրում է, որ շինարարական աշխատանքների որոշակի փուլեր ավարտվել են, իսկ ավարտված գործարքների մասով հարկային արտոնություններ չեն կարող տրամադրվել: 3. Նախագծի 2-րդ կետում նշել «Թի Քեյ Ընդ Փարթներս» ՓԲԸ-ի հետ 03.08.2018թ-ին կնքված պայմանագրի համաձայն մատուցվող խորհրդատվական ծառայությունների գծով արտոնությունների ակկվայման հետևյալ ժամանակահատվածը՝ սկիզբը սահմանելով 01.10.2018թ-ը, հաշվի առնելով, որ ծառայությունները մատուցվում են ամսական կտրվածքով և մատուցված ծառայությունների մասով հարկային արտոնություն չի կարող տրամադրվել Հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկում եմ որոշման նախագծում կատարել համապատասխան հետակնքում՝ վերանայելով գործարքի արժեքը:	Առաջարկությունը ընդունվել է, կցված է կազմակերպության գրությունը և նախագծի լրամշակված տարբերակը

2/8. 12

2/8. 12
ՆԱԽԱԳԾ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

սեպտեմբերի 2018 թվականի N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ)

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2.2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 14-րդ կետին համապատասխան՝

Առաջարկել փազորված մարմնին սահմանել, որ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 02269952) կողմից «Անդաթոուն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03538283) 2018 թվականի օգոստոսի 23-ին կնքված՝ N 012/2018 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի 2800-ամյակին նվիրված քաղ. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բելյուսի, Մ. Խորենացու և Գ. Լուսավորչի փողոցների սահմաններում պարփակված այգու տարածքում կառուցվող շատրվանների թիվ 16 բլոկի հատակի գրանիտե սալերի վրա Երևան քաղաքի քարտեզի փորագրման և թվով 45 հատ անցքերի բացման աշխատանքների իրականացում՝ 8,160,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի 2800-ամյակին նվիրված ք. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բելյուսի, Մ. Խորենացու և Գ. Լուսավորչի փողոցների սահմաններում պարփակված այգու բարեկարգում և հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի մարտի 16-ի N Մ-162-Ա և Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի օգոստոսի 31-ի N 96 – Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Երևան, Մելիք-Ազամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 044
Վեբ կայք՝ www.minfin.am

27.09.18թ.

№ 1/14-2/17410-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
20.09.2018թ. N 03.1/15.11/31753-18 գրության

Հարգելի տիկին Կարապետյան

Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի N Մ-068-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վարդանյան ընտանիք»
բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր
իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

9/26/2018

X

Signed by: HARUTYUNYAN VAZGEN 3703770104

ՎԱԶԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27.09.18թ.

№ 034/52427-18

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«27» սեպտեմբեր 2018թ.

No 06/3-8/56646-18

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 20.09.2018թ.
թիվ 03.1/15.11/31753-18 գրության

Հարգելի տիկին Կարապետյան

Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի N Մ-068-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վարդանյան ընտանիք»
բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ
չկան:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ, հաշվի առնելով «Անդաթոն» ՍՊԸ-ի հետ
23.08.2018թ-ին կնքված պայմանագրի 5.3 կետը, եթե գործարքի որոշակի փուլ
(փուլեր) արդեն իսկ կատարված է, ապա այդ մասով հարկային արտոնություն չի
կարող տրամադրվել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

9/26/2018

X

VERIFIED OCSP 9/26/2018 19:26:16 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ, Ն. Բեժանյան
Հեռ. 060544705

27.09.18թ.

№ 044/52362-18

Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի N Ս-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարկակից գործարքի մասին («Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի կապակցությամբ .առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի դիտողության և առաջարկության վերաբերյալ Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի N Ս-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարկակից գործարքի մասին («Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ, հաշվի առնելով «Անդսթոուն» ՍՊԸ-ի հետ 23.08.2018թ-ին կնքված պայմանագրի 5.3 կետը, եթե գործարքի որոշակի փուլ (փուլեր) արդեն իսկ կատարված է, ապա այդ մասով հարկային արտոնություն չի կարող տրամադրվել:	Կազմակերպությունը 2018 թվականի հոկտեմբերի 2-ի գրությամբ ներկայացրել է պարզաբանում:

2/3. 13

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ պարոն Արթուր Մանուկյանին

Պատենը՝ Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի նախագահ տիկին Աննա Կարապետյանին

«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի տնօրեն Արամ Ղազարյանից

Հարգելի՛ պարոն Մանուկյան, Ստորև ներկայացնում ենք պարզաբանում Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի նախագահի կողմից «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամին վերահասցեագրված Ձեր գրության կապակցությամբ:


Այսպես՝ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի և «Անդսթոուն» ՍՊ ընկերության միջև 2018 թվականի օգոստոսի 23-ին կնքված պայմանագրով «Անդսթոուն» ՍՊ ընկերությունը պարտավորվել է կատարել Երևանի 2800 ամյակին նվիրված Երևան քաղաքի, Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող և Իտալիայի, Բելյուսի, խորենացու և Գ. Լուսավորչի փողոցների սահմաններում պարփակված այգու տարածքում կառուցվող շատրվանների թիվ 16 բլոկի հատակի 56սմx56սմx5սմ չափսի գրանիտե սալերի վրա Երևան քաղաքի քարտեզի 1-2մ խորությամբ փորագրման և թվով 45 հատ Փ390սմ անցքերի բացման աշխատանքները «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից աշխատանքների կատարման համար անհրաժեշտ քարերը տրամադրվելուց հետո 30/երեսուն/ օրյա ժամկետում:

Հարկ է նշել, որ «Անդսթոուն» ՍՊ ընկերության կողմից դեռևս, ինչպես մասնակի, այնպես էլ ամբողջությամբ, չեն կատարվել 2018 թվականի օգոստոսի 23-ին կնքված պայմանագրով ստանձնած աշխատանքները, քանի որ ընկերությանը բավականին ուշ են տրամադրվել աշխատանքների կատարման համար անհրաժեշտ քարերը՝ դրանց Մաքսային պահեստում գտնվելու պատճառաբանությամբ:


Կից ներկայացվում են Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի նախագահի, ինչպես նաև Ձեր գրությունների պատճենները:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝



[Handwritten signature]



Ա. Ղազարյան

2/8. 14
ԼԱԽԱԳԻԾ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

սեպտեմբերի 2018 թվականի N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄ-
ԲԵՐԻ 25-Ի N Մ-1439-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2.2-րդ մասը,
Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ
հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 14-րդ կետին
համապատասխան՝

1. Առաջարկել լիազորված մարմնին սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմ-
նադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատես-
ված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառա-
վարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի
դեկտեմբերի 25-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող
«Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականա-
ցում» ծրագրի մասին՝ N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2016 թվականի
մարտի 18-ի N Մ-207-Ա որոշման խմբագրությամբ) իրականացման հետ և դրա համար
ունեն զգալի նշանակություն՝

1) «Առանցք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09200646) 2018 թվականի սեպտեմբերի 3-ին
կնքված N 10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ցինկապատ
փշալարի և պողպատյա ցանցի ձեռքբերում՝ 3,060,000 դրամի չափով, առանց ավելացված
արժեքի հարկի.

2) «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01205053) 2018 թվականի սեպտեմբերի
11-ին կնքված N 11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կաղապարների
պատրաստում՝ 10,174,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:



0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հեռ.՝ (+374 11) 800 044
Վեբ կայք՝ www.minfin.am

26. 09. 2018թ.
1/14-2/17336-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
19.09.2018թ. N 03.1/15.7/31497-18 գրության

Հարգելի տիկին Կարապետյան

Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1439-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Էյ Թի Փի» բարեգործական
հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների
շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

9/25/2018

X

Signed by: HARUTYUNYAN VAZGEN 3703770104

ՎԱԶԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/52038-18
26. 09. 2018թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«25» 08 2018 թ.
No 06/3-8/56014-18

Ի պատասխան Ձեր 19.09.2018թ.
թիվ 03.1/15.7/31497-18 գրության

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Կարապետյան

Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1439-Ա
որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Էյ Թի Փի»
բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ
չկան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

9/25/2018

X

VERIFIED OCSP 9/25/2018 13:42:56 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ, Ն. Բեժանյան
Հեռ. 060544705

044/51932-18
25. 09. 2018թ.

2/3.15
ՆԱԽԱԳԻԾ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

սեպտեմբերի 2018 թվականի N -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
8-Ի N Մ-451-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ Մ Ա Ս Ի Ն
(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2.2-րդ մասը,
Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ
հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 14-րդ կետին
համապատասխան՝

1. Առաջարկել լիազորված մարմնին սահմանել, որ Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018
թվականի հունիսի 8-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող
«Կաթի հավաքման և պահպանման կետերի ստեղծում» N Մ-451-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի 8-րդ կետում «մինչև օգոստոսի 30-ը» բառերը փոխարինել «մինչև դեկտեմբերի
30-ը բառերով»:

2. Սահմանելով, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ.
Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) կնքված՝ ստորև նշված պայմանագրով
նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ինտեր մաստեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011141) 2018 թվականի հուլիսի 18-ին
կնքված՝ N 18/07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական
աշխատանքների իրականացում՝ 11,125,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի
հարկի:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 044
Վեբ կայք՝ www.minfin.am

№ 1/14-Ձ/15292-18
27.08.2018թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
21.08.2018թ. N 15/15.6/26172-18 գրության

Հարգելի պարոն Բարխուդարյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 8-ի N Մ-451-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ԱՌԴԱ» բարեգործական
հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների
շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

8/25/2018

X

Signed by: HARUTYUNYAN VAZGEN 3703770104

ՎԱԶԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/44191-18
27.08.2018թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«ՁՁ» 08 2018թ.

No 06/3-8/48835-18

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՏԵՂԱԿԱԼ ՊԱՐՈՆ Ա. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 21.08.2018թ.
թիվ 15/15.6/26172-18 գրության

Հարգելի պարոն Բարխուդարյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 8-
ի NՄ-451-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ԱՌԴԱ»
բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք
հետևյալը:

«Ինտեր մաստեր» ՍՊԸ-ի հետ կնքված գործարքը հիմնավորող պայմանագրի 7-
րդ կետի համաձայն՝ պայմանագրի գործողության ժամկետը ավարտվում է
30.12.2018թ.-ին, այն դեպքում երբ վերոնշյալ որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ
կետում ծրագրի ավարտի ժամկետ է նշված 2018 թվականի օգոստոսի 30-ը: Հաշվի
առնելով վերոնշյալը, առաջարկում ենք գործարքը համապատասխանեցնել ծրագրին:

Հարգանքով՝

8/22/2018

X

VERIFIED OCSP 8/22/2018 16:33:47 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ փարչարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎԱՀԿ, Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

044/43258-18
22.08.2018թ.

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 8-ի N Մ-451-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
«ՀՀ պետական եկամուտների կոմիտե – 22.08.18, N 06/3-8/48835-18	
«Ինտեր մաստեր» ՄԴԸ-ի հետ կնքված գործարքը հիմնավորող պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ պայմանագրի գործողության ժամկետը ավարտվում է 30.12.2018թ.-ին, այն դեպքում երբ վերոնշյալ որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում ծրագրի ավարտի ժամկետ է նշված 2018 թվականի օգոստոսի 30-ը: Հաշվի առնելով վերոնշյալ, առաջարկում ենք գործարքը համապատասխանեցնել ծրագրին	Առաջարկությունը ընդունվել է, կցված է կազմակերպության գրությունը և նախագծի լրանջակված տարբերակը

2/3.15



«ԱՌԴԱ»

բարեգործական հիմնադրամ

Երևան, Պարոյր Սևակ 9, հեռ. /010/20-94-22; 20-94-23
Կ-01/10

01 հոկտեմբերի 2018 թ.

ՀՀ առաջին փոխվարչապետ

պրն Ա. ՄԻՐՉՈՅԱՆՅԱՆԻՆ

պատճենը ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ

պրն Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրզոյան,

Ի լրումն մեր 2018 թվականի օգոստոսի 20-ի Կ-20/08 նամակի և ի պատասխան ՀՀ ՊԵԿ 22. 08. 2018թ. N 06/3-8/48835-18 գրության հայտնում եմ, որ Վանաձոր – Ալավերդի մայրուղու վերանորոգման պատճառով, դուրս կազմակերպության համաձայնությամբ, ծրագիրը ուշացումով ենք սկսել: Այս հանգամանքով է պայմանավորված կապալառու-կազմակերպության հետ կնքված պայմանագրի վերջնական ժամկետը:

Ուստի խնդրում եմ ՀՀ ԿԲԾՀՀ-ի 2018 թվականի հունիսի 8-ի N Մ-451-Ա որոշմամբ բարեգործական որակված «Կաթի հավաքման և պահպանման կետերի ստեղծում» ծրագրի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Ծրագրի 8-րդ կետում «մինչև օգոստոսի 30-ը» արտահայտությունը փոխարինել «մինչև դեկտեմբերի 30-ը» արտահայտությամբ:

Առդիր 1 թերթ:

Հարգանքներով՝

Հրահատ Ստեփանյան
Գործադիր տնօրեն

2/3.15

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

սեպտեմբերի 2018 թվականի N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ
ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2.2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 14-րդ կետին համապատասխան՝

1. Առաջարկել լիազորված մարմնին սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշման 1-ին կետում «2,242,067,200 դրամ» բառերը փոխարինել «2,268,668,594 դրամ» բառերով և որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա, դեկտեմբերի 22-ի N Մ-1157-Ա ու 2018 թվականի մարտի 7-ի N Մ-135-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է)։

2. Սահմանելով, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 01245672) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ֆիլիշին» ՍՊԸ հետ (ՀՎՀՀ՝ 07905342) 2018 թվականի սեպտեմբերի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Դիլիջանում (Գետափնյա փողոց 2/14, բն. 69) բնակարանի ձեռքբերում՝ 12,195,585 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ֆիլիշին» ՍՊԸ հետ (ՀՎՀՀ՝ 07905342) 2018 թվականի սեպտեմբերի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Դիլիջանում (Գետափնյա փողոց

2/14, բն. 68) բնակարանի ձեռքբերում՝ 14,735,809 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Բարսիս» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02230504) հետ 2018 թվականի օգոստոսի 28-ին կնքված N 01850T18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ITACA CTFS-32 metano մակնիշի F-կաթսայի և գազի կաթսայի ձեռքբերում՝ 537,933 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) ԱՄՆ-ի քաղաքացի Կատրինա Շաքարյանի (անձնագիր՝ 506279104, տրված է 05.05.2015թ., վավերական է մինչև 05.05.2025թ.) հետ 2018 թվականի օգոստոսի 20-ին կնքված N 01-20.08.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի օգոստոսի 20-ից մինչև նոյեմբերի 19-ը խմբագրում, սրբագրում, թարգմանում, և այլ ծառայությունների մատուցում՝ 3,423,300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի

«Միմոնյան» կրթական հիմնադրամի գլխավոր տնօրեն

Մարի Լու Փափագյանի կողմից


«01» Հոկտեմբերի 2018թ

«Թումա» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ»

Ծ Ր Ա Ձ Ի Ր

Մարի Լու Փափագյան

1. Ծրագրի նպատակը



• Աջակցել կրտսեր խմբի (12-18 տարեկան) ՀՀ և ԼՂՀ երիտասարդներին ընդհանուր գիտելիքներ ձեռք բերել ստեղծարար տեխնոլոգիաների բնագավառում,

• Ստանձին դասընթացների միջոցով աջակցել կրտսեր խմբի երիտասարդներին զարգացնելու իրենց տեխնոլոգիական գիտելիքները կոմպլեքս ռաբոթություններով,

• Ստանձին նպատակադրված դասընթացների միջոցով աջակցել ալագ խմբի (19-26 տարեկան) ՀՀ երիտասարդներին իրենց մասնագիտական գիտելիքները ընդլայնմանը կոմպլեքս ռաբոթություններով,

• Խրախուսել կենտրոնի կրտսեր և ալագ խմբի անդամներին ստեղծել շփումներ իրենց հասակակից օտարերկրյա երիտասարդների, մասնագետների և արհեստավարների հետ,

• Աջակցել կենտրոնի կրտսեր և ալագ խմբի անդամներին իրենց մասնագիտական տեսական գիտելիքները օգտագործել պրակտիկ, գործարար ուշադրում՝ այսպիսով օժանդակելով նոր աշխատատեղերի և գործարար հարաբերությունների ստեղծմանը:

Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, յուրօրեի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններին:

Ծրագիրն իրականացվելու է Միմոնյան կրթական հիմնադրամի սեփական միջոցների, ՄԱԿ և Միլվա Միմոնյաններ հիմնադրամի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, Գալուստ Գյուրբեկյան հիմնադրամի, Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոնի հիմնադրամի, Ջեյ Էյ Էմ բարեգործական հիմնադրամի ինչպես նաև տարբեր ֆիզիկական անձանց կողմից ստացվող հաճախությունների, օնլայն արտոնությունների և օնլայն արտոնությունների հաշվին: Ծրագրի կատարողը, օգտագործելով սույն ծրագրի, ինչպես նաև նախորդ՝ «Ստեղծարար Տեխնոլոգիաների Երիտասարդական Կենտրոն» և «ԹՈՒՄՍ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրերի ակադա ազատ ռեսուրսները, իրականացնելու է նաև ծրագրից անկախ այլ չկատարվող գործունեություններ, ներառյալ ձեռնարկատիրական, գործունեություն, որից ստացվող գումարները կօգտագործվեն Ծրագրի ֆինանսավորմանը:

«Միմոնյան» կրթական հիմնադրամ (ՓԲԸ): Միմոնյան Կրթական Կենտրոն (ՓԲԸ): Միմոնյան Կրթական Կենտրոն (ՓԲԸ):

Ծրագիրն իրականացվելու է ՀՀ-ում և ԼՂՀ-ում՝ ստեղծարար տեխնոլոգիաների բնագա-

	վառում:
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 2,268,998,594 (երկու միլիարդ երկու հարյուր վաթսուհին միլիոն ինը հարյուր ինսուտուր հարյուր հինգ-հարյուր ինսուտուր) դրամ:
7. Բարեգործություն ստացող	Ծրագրի շահառուներն են՝ - Կրտսեր խմբի 12-18 տարեկան ՀՀ և ԼՂՀ երիտասարդներ: Ծրագիրը բաց կլինի նաև բոլոր շահառուների համար, որոնք ինքնուրույն կամ ծնողների միջոցով հետադարձություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող ընդհանուր և կոմպլեքս ռաբոթություններով կրթական գործունեությանը: Շահառուների ընտրությունը կլինի բաց ադմինիստրատիվ միջոցով: Ծրագիրը հերթափոխության միջոցով տարվա ընթացքում կարող է հարթվել ինսուտուր հաշվարկող երիտասարդներ, այն կգործի գրեթե արտադարձական ակումբների ղեկավար, սակայն յուրօրինակ կրթական մեթոդներով: Որոշ դեպքերում, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով: - Ալագ խմբի 19-26 տարեկան ՀՀ և ԼՂՀ երիտասարդներ: Ծրագիրը բաց կլինի արդեն իսկ որոշակի մասնագիտական փորձ ունեցող շահառուների համար, որոնք ինքնուրույն հետադարձություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող ընդհանուր նպատակադրված դասընթացներին: Որոշ դեպքերում, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով: «Թումա» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագիրը, լինելով նախորդ «Ստեղծարարական Տեխնոլոգիաների Երիտասարդական Կենտրոն» և «ԹՈՒՄՍ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրերի շարունակությունը, նախատեսվում է իրականացվել ևս 3 տարով՝ հետագայում շարունակվելու նպատակով, 2017թ-ի հունվար ամսից մինչև 2019թ-ի դեկտեմբեր ամիսը ներառյալ:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամիսաբաշտ ֆինանսական միջոցների ծախսը	Ծրագիրը պայմանավորված կարելի է բաժանել որպես մի բաժնի գոյակետ իրականացվող միջոցառումների ամբողջություն, որոնք անընդհատ իրականացվելու են հետագա երեք տարիների ընթացքում և միավոր են ծրագրի նպատակների իրագործմանը, մասնագիտական Ծրագրի կատարողն իրականացնելու է հետևյալ միջոցառումները. - ստեղծարար տեխնոլոգիաների ոլորտում երիտասարդներին ընդհանուր գիտելիքների տրամադրում, - նպատակադրված դասընթացների միջոցով խորացնել երիտասարդների մոտ առանձին ուղղվածության գիտելիքները, - տարբեր միջոցառումների կազմակերպման միջոցով խրախուսել կենտրոնի երիտասարդների միջև շփումը, Երբ տարվա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները կազմում են 2,268,998,594 (երկու միլիարդ երկու հարյուր վաթսուհին միլիոն ինսուտուր հարյուր հինգ-հարյուր ինսուտուր) դրամ: - Ուղղակիորեն շահառուներին ապաստարկող անձնակազմի (ուսուցիչներ, տնտեսական բովանդակության մշակողներ և մասնագետներ, վարձույթներ տնտեսներ, ծրագրավորողներ,

հարյուրակցման ութուրդի աշխատողներ, խորհրդատուներ և այլն) աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ - 1,345,906,305 (մեկ միլիարդ երեք հարյուր քառասունհինգ միլիոն ինը հարյուր վեց հազար երեք հարյուր հինգ) դրամ:

• Վարչական մասի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ - 149,545,145 (մեկ հարյուր քառասունհինգ միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար մեկ հարյուր քառասունհինգ) դրամ:

• Նպատակաուղղված դասընթացների կազմակերպման ծախսեր - 167,040,000 (մեկ հարյուր վաթսույուր միլիոն քառասուն հազար) դրամ:

• Գրանցման, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համաճանաչման ծախսեր - 215,262,400 (երկու հարյուր տասնհինգ միլիոն երկու հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր) դրամ:

• Դատվթացավարների կառույցի ապահովման նպատակով բնակարանների ձեռք բերում - 26,931,394 (քսանվեց միլիոն ինը հարյուր երեսունմեկ հազար երեք հարյուր իննսուներկու) դրամ:

• Առկա հիմնական միջոցների (համակարգային, տեխնիկա, արտադրական և տնտեսական գույք, սարքավորումներ և այլն) և շենքային պայմանների այդ թվում հիմնարկային պատկանող առանձին բնակարանների և բնակելի տների պահպանման և վերանորոգման ծախսեր (էլեկտրական, սանտեխնիկական, հարդարման, կոյուղու վերանորոգման և շենքային պայմանների պահպանման համար անհրաժեշտ այլ նմանատիպ ապրանքներ և ծառայություններ) - 38,832,320 (երեսուներեք միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր քսան) դրամ:

• Տարբեր միջոցառումների կազմակերպման ծախսեր - 52,112,640 (պիսուներկու միլիոն մեկ հարյուր տասներկու հազար վեց հարյուր քառասուն) դրամ:

• Սարքավորումների, համակարգային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերման ծախսեր - 190,360,000 (մեկ հարյուր իննսուն միլիոն երեք հարյուր վաթսու հազար) դրամ:

• Գործուղման ծախսեր - 68,031,360 (վաթսուներ միլիոն երեսունմեկ հազար երեք հարյուր վաթսուն) դրամ:

• Այլ չմիջատեսված ծախսեր - 14,977,030 (տասներոր միլիոն ինը հարյուր յոթասուսուներեք հազար երեսուն) դրամ:

• 2017-2019թթ-ի ընթացքում 163,288,000 (մեկ հարյուր վաթսուներեք միլիոն երկու հարյուր ութսուսու հազար) դրամի սարքավորումների, համակարգային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերում և ներմուծում արտերկրից: Մինչև 2018թ-ի փետրվարի 1-ը ընկած ժամանակահատվածում ներմուծվել է 113,266,095 (մեկ հարյուր տասներեք միլիոն երկու հարյուր վաթսուվեց հազար իննսուներեք) դրամի համակարգային տեխնիկա:

10. Զեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համադրող մարմանը, ծախսերը և միջոցառումները:



2/3. 16

• 2017-2019թթ-ի ընթացքում 27,072,000 (քսանյուր միլիոն յոթասուսուներկու հազար) դրամի ապրանքների, համակարգային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերում է՝ հից:

• 2017-2019թթ-ի ընթացքում 44,052,480 (քառասուներոր միլիոն հիսունհինգ հազար չորս հարյուր ութսուն) դրամի գրանցման, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համաճանաչման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:

• 2017-2019թթ-ի ընթացքում 171,209,920 (մեկ հարյուր յոթասուսուներեք միլիոն երկու հարյուր ինը հազար ինը հարյուր քսան) դրամի գրանցման, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համաճանաչման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում է՝ հից:

• 2017-2019թթ-ի ընթացքում 26,931,394 (քսանվեց միլիոն ինը հարյուր երեսունմեկ հազար երեք հարյուր իննսուներկու) դրամի բնակարանների ձեռք բերում է՝ հից:

• 2017-2019թթ-ի ընթացքում 5,832,320 (հինգ միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր քսան) դրամի առկա հիմնական միջոցների (համակարգային, տեխնիկա, արտադրական և տնտեսական գույք, սարքավորումներ և այլն) և շենքային պայմանների այդ թվում հիմնարկային պատկանող առանձին բնակարանների և բնակելի տների պահպանման, վերանորոգման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից (էլեկտրական, սանտեխնիկական, հարդարման, կոյուղու վերանորոգման և տարածքի պահպանման համար անհրաժեշտ այլ նմանատիպ ապրանքներ և ծառայություններ):


• 2017-2019թթ-ի ընթացքում 33,000,000 (երեսուներեք միլիոն չորս հարյուր տասնվեց հազար մեկ հարյուր վաթսուն) դրամի առկա հիմնական միջոցների (համակարգային, տեխնիկա, արտադրական և տնտեսական գույք, սարքավորումներ և այլն) և շենքային պայմանների այդ թվում հիմնարկային պատկանող առանձին բնակարանների և բնակելի տների պահպանման, վերանորոգման համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների ձեռք բերում է՝ հից (էլեկտրական, սանտեխնիկական, հարդարման, կոյուղու վերանորոգման և տարածքի պահպանման համար անհրաժեշտ այլ նմանատիպ ապրանքներ և ծառայություններ):

• 2017-2019թթ-ի ընթացքում 50,112,000 (հիսուն միլիոն մեկ հարյուր տասներկու հազար) դրամի նպատակաուղղված դասընթացների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում է՝ հից:

• 2017-2019թթ-ի ընթացքում 116,928,000 (մեկ հարյուր տասնվեց միլիոն ինը հարյուր քսանութ հազար) դրամի նպատակաուղղված դասընթացների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:

• 2017-2019թթ-ի ընթացքում 41,690,112 (քառասունմեկ միլիոն վեց հարյուր իննսուն հազար մեկ հարյուր տասներեք) դրամի սարքավորումների, համակարգային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերում և ներմուծում արտերկրից:

• 2017-2019թթ-ի ընթացքում 10,422,528 (տաս միլիոն չորս հարյուր քսաներկու հազար չորս)



2/3. 16

2/3. 16

2/3. 16



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 044
Վեբ կայք՝ www.minfin.am

1/14-2/17619-18
28.09.18

«ՀԱՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
24.09.2018թ. N 03.1/15.1/31891-18 գրության

Հարգելի տիկին Կարապետյան

Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական
հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է
փոփոխություն կատարել նաև վերը նշված որոշման 1-ին և ծրագրի 6-րդ կետերում:
Մաժամանակ անհրաժեշտ է որոշման նախագծի վերնագիրը համապատասխանեցնել նաև
որոշման նախագծի 1-ին կետի բովանդակությանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

9/28/2018


X

Signed by: HARUTYUNYAN VAZGEN 3703770104 ԿԱԶԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/52804-18

5 հարյուր քառույթ) դրամի տարբեր միջոցառումների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և մեքուծում արտելից: • 2017-2019թթ-ի ընթացքում 7,488,515 (յոթ միլիոն չորս հարյուր ութսունույթ հազար հինգ հարյուր տասնհինգ) դրամի այլ չմարտատնութե-ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և մեքուծում արտելից: • 2017-2019թթ-ի ընթացքում 7,488,515 (յոթ միլիոն չորս հարյուր ութսունույթ հազար հինգ հարյուր տասնհինգ) դրամի այլ չմարտատնութե-ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և մեքուծում արտելից:	Երեք տարվա համար կազմակերպական ծախսերը կազմում են 216,256,289 (երկու հարյուր տասնվեց միլիոն երկու հարյուր հիստուվեց հազար երկու հարյուր ութսունույթ) դրամ, որից՝ • Վարչական մասի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ - 149,545,145 (մեկ հարյուր քառասունմեկ միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար մեկ հարյուր քառասունհինգ) դրամ: • Վարչական մասի գրասենյակային, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համանման ծախսեր - 22,026,240 (քսաներկու միլիոն քսանվեց հազար երկու հարյուր քառասուն) դրամ: • Վարչական մասի հիմնական միջոցների և տարածքի պահպանման ծախսեր - 1,883,232 (մեկ միլիոն ութ հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր երեսուներկու) դրամ: • Գործուղման ծախսեր - 20,409,408 (քսան միլիոն չորս հարյուր ինը հազար չորս հարյուր ութ) դրամ: • Վարչական մասով տարբեր միջոցառումների կազմակերպման ծախսեր - 5,211,264 (հինգ միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր վաթսունչորս) դրամ: • Սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տեղեկական և արտադրական գույքի ձեռք բերման ծախսեր - 13,536,000 (տասներեք միլիոն հինգ հարյուր երեսունվեց հազար) դրամ: • Այլ չմարտատնութե-ապրանքների և ծախսեր - 3645000 (երեք միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար) դրամ:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի անհրաժեշտության դեպքում կարող է համագործակցել տարբեր շահագրգիռ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ պետական և մասնավոր մարմինների հետ: Ծրագիրը կնշակի իր գործունեության արդյունավետության գնահատման մեթոդի հսկողության համակարգ և պարբերաբար ատույնի կենտրոնի կողմից: ՀՀ կառավարության համակարգում բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի արդյունավետության մեկամիջոցների վերահսկողության մեխանիզմների մեկամիջոցները:



28.9



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

2/3. 16

01 » 10 2018թ.
No 0613-8/59384-18

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 24.09.2018թ.
թիվ 03.1/15.1/31891-18 գրության

Հարգելի տիկին Կարապետյան

Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմ-
նադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում առաջարկում ենք հետևյալը.

1. Ներկայացնել պարզաբանումներ վերը նշված ծրագրի շրջանակներում ՀՀ
մարզեր և ԼՂՀ գործուղված դասընթացավարների կացությունը ապահովելու
ուղղությամբ մինչև 01.09.2018թ-ը կատարված ծախսերի, ինչպես նաև ինչքան է
կազմում այդ ծախսերի մեջ Դիլիջան և տարածաշրջան գործուղումների մասով
կատարված ծախսերի տեսակարար կշիռը:

2. Ներկայացնել տեղեկատվություն 01.09.2018թ-ից մինչև ծրագրի ավարտը՝
2019թ-ի դեկտեմբեր ամիսը, նախատեսվող դասընթացների պարբերականության և
այդ մասով կանխատեսվող ծախսերի վերաբերյալ:

3. Նախագծի 3-րդ կետով «Բարսիս» ՍՊԸ-ի հետ 27.08.2018թ-ին կնքված
պայմանագրի 2.4 կետի համաձայն, պայմանագրով նախատեսված ապրանքի
մատակարարման վերջնաժամկետ է սահմանված սեպտեմբերի 30-ը, ինչը ենթադրում
է, որ գործարքը ավարտվել է մինչ գործարքը բարեգործական ծրագրին հարակից

044/53011-18

2/3. 15

գործարքի որակումը: Հետևաբար այս գործարքի մասով հարկային արտոնություն չի
կարող տրամադրվել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

9/28/2018

X

VERIFIED OCSP 9/28/2018 18:39:26 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝

ՀՀ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ, Ն. Բեժանյան,
Հեռ. 060544705

Միմոնյան կրթական հիմնադրամ
Simonian educational foundation

ՀՀ առաջին փոխվարչապետ
պարոն Արարատ Միրզոյանին

Հարգելի պարոն Միրզոյան

Ի լրումն մեր կողմից 04.09.2018-ին ներկայացված գրությանը և հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալի կողմից ՀՀ կառավարության աշխատակազմի բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի նախագահ տիկին Աննա Կարապետյանի թիվ 03.1/15.1/31891-18 առ 24.09.2018թ-ի գրության պատասխանները հայտնում են հետևյալը.

• ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի առաջարկը ամբողջությամբ ընդունվել է՝ մասնավորապես փոփոխություն է կատարվել լրամշակված ծրագրի 6-րդ կետում՝ թիվը համապատասխանեցվել է ծրագրի բուջեիս: Փոփոխված ծրագիրը կցվում է.

• ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալի գրության 1-ին կետի վերաբերյալ հայտնում են հետևյալը. Միմոնյան կրթական հիմնադրամը 2017թ-ի հունվարի 1-ից սկսած (իսկ մինչ այդ նախորդ ծրագրերով) պարբերաբար դասընթացավարներ է գործուղում ԼՂՀ ք. Ստեփանակերտ, ք. Գյումրի և ք. Դիլիջան: Նշված դասընթացավարների կացության ծախսերը հոգալու նպատակով Հիմնադրամը վարձակալել է բնակարաններ՝ ք. Ստեփանակերտում թվով 3 հատ, ք. Դիլիջանում թվով 2 հատ, ք. Գյումրիում թվով 3 հատ (ընդ որում Հիմնադրամը 2016թ-ի հունվարի 15-ին և հունիսի 14-ին Գյումրի քաղաքում արդեն իսկ սեփականության իրավունքով ձեռք է բերել թվով 2 բնակարան՝ կացության ծախսերը նվազեցնելու նպատակով): Նշված ժամանակահատվածի համար վարձակալված

ՀՀ, Երևան 0038, Հալաբյան 16, հեռ. +374 10 398413
RA, Yerevan 0038, Halabyan 16, tel. +374 10 398413

09.09.2018
01.10.18

Միմոնյան կրթական հիմնադրամ
Simonian educational foundation

բնակարանների վարձակալական վճարները 01.01.2017թ-ից մինչև 31.08.2018թ-ը կազմել են 20,172,704 դրամ: Կատարված ծախսերի տեսակարար կշիռն ըստ տարածաշրջանների ունեն հետևյալ տեսքը՝ ք. Ստեփանակերտ 61%, ք. Գյումրի 5%, ք. Դիլիջան 34%,

• ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալի գրության 2-րդ կետի վերաբերյալ հայտնում են հետևյալը. ք. Դիլիջան դասընթացավարները գործուղվում են ամիսը 2-3 հոգի յուրաքանչյուրը՝ 30 օրով, և նախատեսվում է (առանց բնակարանների ձեռք բերման) 01.09.2018թ-ից մինչև 2019թ-ի դեկտեմբերը կատարել 5,664,000 դրամի կացության ծախս: Հարկ է նշել նաև, որ «Թումո սպորտարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագիրն իր գոյության ընթացքում արդեն 3 անգամ երեք տարով երկարաձգվել է և նախատեսվում է ծրագիրը 2019թ-ից հետո ևս երկարաձգել: Հարկ են համարում նաև նշել, որ ձեռք բերվող բնակարանները գտնվում են Դիլիջանի նորակառույց շենքում և՛ որոշակի ձևափոխումներից հետո դրանք կապահովեն անհամեմատ լավ կացության պայմաններ քան այն բնակարանները, որոնք վարձակալում է Միմոնյան կրթական հիմնադրամը: Ուստի հաշվի առնելով վերոգրյալը, բնակարանների ձեռք բերումը համարում ենք խիստ նպատակահարմար.

• ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալի գրության 3-րդ կետի վերաբերյալ հայտնում են, որ ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2018թ-ի հոկտեմբերի 31-ը: Համապատասխան համաձայնագիրը կցվում է:

«Միմոնյան» կրթական հիմնադրամի գլխավոր տնօրեն՝



Մարի Լու Փանակյան
01.10.2018

ՀՀ, Երևան 0038, Հալաբյան 16, հեռ. +374 10 398413
RA, Yerevan 0038, Halabyan 16, tel. +374 10 398413

2/3.16

2/3.16

Համայնագիր
Առավանգի պայմանագրի

28.09.2018

1. Երևան

«Բարսի» ՍՊԸ ընկերությունը (այսուհետ՝ Վանագ), ի դեմս տնօրեն Զ. Մեհենջյանի, սկզբում և ընկերության կանոնադրության երկուսն էլ կողմից, և

Սիմոնյան կրթական կենտրոնը (այսուհետ՝ Գնոր) ի դեմս գլխավոր տնօրեն Մարի Լուի Փաֆայանի, սկզբում և կենտրոնի կանոնադրության երկուսն էլ կողմից, մյուս կողմից առանձին հետապնդելու դեպքում կողմ, իսկ համատեղ չլուրջ, կնքվելու սույն համայնագիրը, այսուհետ՝ Համայնագիր հետագայի վերաբերյալ:

- Համայնագիրը կնքվում է 28.08.2018-ին կնքված առավանգի պայմանագրի (այսուհետ՝ Վանագի պայմանագիր) անբաժանելի մասն է կնքվում է ի կատարումն Պայմանագրի իրականացման:
- Համայնագրով կողմեր ստանում են պայմանագրի 2.4 կետի վերաբերյալ հոր խնդրանքները հետևյալ բովանդակությամբ՝ «Վանագը Արարիկի Գնորին և հանձնում մինչև 2018 թվականի և միջոցների 31-ն ընկած ժամանակահատվածում»:
- Համայնագրով կողմեր ստանում են Պա: Դանագի մեղադրանքները կետերը բովանդակված:
- Համայնագիրը կնքվում է հայ-անգլիական լեզվով և կնքվում է համապատասխան ուժի ունեցող օրինակներով: Կողմերից յուրաքանչյուրի տրվում է Համայնագրի մեկ օրինակ:

Վանագ
«Բարսի» ՍՊԸ
Հասցե՝ 1. Երևան, Արապյանցյա 57/2
Հեռ.՝ 02230504
ՀՆ՝ 001-172089-002
«Եր-Եր-Ս» Բանկ-Հայաստան ՓԲԸ
Տնօրեն
Զ. Մեհենջյան

Գնոր
Սիմոնյան կրթական կենտրոն
Հասցե՝ 1. Երևան, Հալաբյան 16
Հեռ.՝ 01245672

Գլխավոր տնօրեն
Մարի Լուի Փաֆայան
Մարի Լուի Փաֆայան

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ կառավարության բարեփոխական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Ս-018-Ա որոշման մեջ և որոշմանը հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական կենտրոն)» որոշման նախագծի վերաբերյալ

Դիտորդության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարություն - 28.09.18, N 1/4-2/17619-18	
Անհրաժեշտ է փոփոխություն կատարել նաև վերը նշված որոշման 1-ին և ծրագրի 6-րդ կետերում: Մասնամասնակ անհրաժեշտ է որոշման նախագծի վերջնագիրը համապատասխանեցնել նաև որոշման նախագծի 1-ին կետի բովանդակությանը	Կցված են կազմակերպության գրությունը և նախագծի ու ծրագրի լրամշակված տարբերակները
ՀՀ պետական եկամուտների կոմիտե - 01.10.18, N 06/3-8/57384-18	
